Քաղաքակրթությունն սկսվում է հայերից

Դասարան- 7-րդ

Հեղինակային խումբ՝ Սողոմոնյան Սոֆյա

Հովակիմյան Միքայելա

Նախագծավար ՝ Հակոբյան Ծողակաթ

Հայաստանը՝ Հնդեվրոպական ցեղերի ու լեզուների օրրան

1.Ձևավորել՝ Հայոց հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական պայմանների, հայերի տեղաբնիկ ծագումնաբանության վերաբերյալ գիտելիքներ

2. Խթանել նախնիների, անցյալի հանդեպ հարգանքը, պատմական և մշակութային ժառանգության պահպանության ձգտումը

3.Դրսևորել հետազոտելու, փորձարկելու տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր:

ՄԵՐ ԹԻՄԸ

Հովակիմյան Միքայելա -Նախագծի կառավարիչ և հանրային կապերի պատասխանատու

Սողոմոնյան Սոֆյա- Հետազոտության համակարգող և հաղորդակցության կառավարիչ

Տեղեկության աղբյուրներ

armhistory.do.am/ www.hayagitaran.am/ //www.hayary.org/ //www.old.ysu.am/ -u/www.historyofarmenia-am.armin.am/

Թ. Գամղրելիձե և Վ. Իվանով - Հնդեվրոպական լեզուների նախապատմությունը Ա. Մովսիսյան - Հայ ժողովրդի ծագումն ու կազմավորումը:

Էդուարդ Աղայան, Լեզվաբանության ներածություն, Ե., Մակմիլան Արմենիա, 2009, էջ 242-244

Հնդեվրոպական լեզվաընտանիք

Լեզվաընտանիքը ցեղակից լեզուների ամբողջութուն է, լեզուների ընտանիք:
Նախալեզուն՝ ցեղակից լեզուների հիմք հանդիսացած տվյալ ընտանիքի կամ խմբի մեջ մտնող բոլոր լեզուների համար ընդհանուր նախնական լեզու:
Հայերը պատկանում են աշխարհի ամենաբազմանդամ լեզվաընտանիքին, որը կոչվում է **հնդեվրոպական**:
Այդ լեզվաընտանիքի լեզուները գործածվել են Հնդկաստանի արևելքից մինչև Եվրոպայի արևմուտք:



Որտեղ է եղել հնդեվրոպական նախահայրենիքը

Այդ լեզվաընտանիքի լեզուները գործածվել են Հնդկաստանի արևելքից մինչև Եվրոպայի արևմուտք: Հնդեվրոպական նախահայրենիքը զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելքը, Միջագետքի հյուսիսը և Իրանի հյուսիս-արևմուտքը: Այսինքն՝ Հայկական լեռնաշխարհը կազմել է հնդեվրոպական նախահայրենիքի **կենտրոնական շրջանը**:

Հայերենին ցեղակից լեզուներից են անգլերենը, ֆրանսերենը, իսպաներենը, իտալերենը, ռուսերենը, քրդերենը և այլ լեզուներ: Այդ լեզուներով խոսողների թիվն անցնում է 3 միլիարդից



Հնդեվրոպացիների նախահայրենիքի մասին կատարված հետազոտություններից կարևորում են լեզվաբանական ուսումնասիրությունները: Լեզվաբաններ Վ. Իլլիչ-Սվիտիչը, Վ. Գեորգիևը, Օ. Ծիրոկովը, Գ. Կլիչկովը, Ա. Դոլգոպոլսկին, Վ. Իվանովը, Ռ. Իշխանյանը և ուրիշներ իրենց աշխատություններում պատմահամեմատական լեզվաբանության, նաև հնագիտական ու մարդաբանական տվյալներով հիմնավորում են այն տեսակետը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվում էր Առաջավոր Ասիայում: Օ. Ծիրոկովն ու Գ. Կլիչկովը նույն մեթոդներով (լեզվաբանություն, հնագիտություն, մարդաբանություն) ավելի հստակ եզրակացության են հանգում, այն է, հայերը տեղաբնիկ են իրենց զբաղեցրած տարածքներում՝ Հայկական լեռնաշխարհում:

Լ. Լ. Կավալլի – Սֆորզան իր նոր աշխատության մեջ վկայակոչելով Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդների (շումերներ, աքադացիներ, խուրրիներ, խեթեր) գրավոր աղբյուրները, պահպանված առասպելներն ու զրույցները, փորձ է արվում հիմնավորելու այն տեսակետը, որ Հայկական լեռնաշխարհը արարչագործության ու քաղաքակրթության հնագույն կենտրոններից է:

Աշխատության մեջ կրկին փորձ է արվում քննարկելու ու պաշտպանելու հնդեվրոպացիների նախահայրենիքը Առաջավոր Ասիայի արևելյան շրջաններում (Հայկական լեռնաշխարհ և շրջակա տարածքներ) գտնվելու և Հայկական լեռնաշխարհում հայերի տեղաբնիկ լինելու մասին վերոհիշյալ տեսակետները: Ուշադրություն է դարձվում նաև այն բոլոր հարցերին, որոնք կարող են օգնել հիմնավորելու այս տեսակետները: Քննարկվում են հնագիտական, ազգագրական, լեզվաբանական, մարդաբանական, դիցաբանական, էթնիկական տեղաշարժերի և այլ կարգի հարցեր՝ ուշադրության կենտրոնում պահելով հայ էթնոսը, հայոց պատմությունն ու Հայկական լեռնաշխարհը:



Հայաստանը հին արևելքի վեպերում և առասպելներում: Հայաստանը **սրբազան երկիր** է համարվել նաև այլ ժողովուրդների համար: Աստվածաշնչին համաձայն, *Աստված առաջին մարդկանց ստեղծեց Եդեմ – դրախտում: Այն գտնվում է Եփրատ և Տիգրիս գետերի ակունքներում*, այսինքն Հայկական լեռնաշխարհում: Աստվածաշունչ մատյանում պատմվում է նաև, որ *Եդեմ էին պահվում իմաստության և անմահության խորհրդանշանները*: Իսկ *համաշխարհային ջրհեղեղից հետո Նոյի տապանը հանգրվանել է Արարատ լեռների վրա*, կրկին Հայաստանում:

Տեղեկություններ են պահպանվել Հին աշխարհի բազմաթիվ արձանագրություններում: Միջագետքից և Սիրիայից հայտնաբերված սեպագիր արձանագրություններում նշվում է, որ Հայաստանը համարվել է «Աստվածային սուրբ օրենքների երկիր», «Անմահության երկիր», մի երկիր, որտեղից տարածվել են իմաստությունն ու արվեստը: Հնագույն զրուցների համաձայն՝ Արեգակի ոսկյա կացարանը Վանա լճի հատակին էր…

Հայերի ծագման մասին պատմող ավանդազրույցները

Հայերի ծագման մասին առասպելներ են եղել դեռևս անհիշելի ժամանակներում: Դրանցից հնագույնի համաձայն՝ հայերը դյուցազուն Հայկի ժառանգներն են: Հայերի ծագման մասին առասպելներ են պահպանել հույները, հրեաները, վրացիները, արաբները և այլ ժողովուրդներ: Բոլորի մեջ հայերը ներկայանում են որպես մեծ ու քաջ ժողովուրդ, որի հետ ազգակից լինելը պատվաբեր է:

19-20-րդ դարերում ուսումնասիրողները, հիմք ընդունելով հայ պատմիչներ Խորենացու, Ագաթանգեղոսի (5-րդ դար), Փավստոս Բուզանդի (5-րդ դար), Սեբեոսի (7-րդ դար), Հովհ. Դրասխանակերտցու (10-րդ դար) և այլոց վկայությունները Հայկ Նահապետի ու նրա գերդաստանի հարավից եկած լինելու մասին, առաջ են քաշել այն տեսակետը, որ հայ ժողովուրդը կազմավորվել է Հայկի սերունդների և Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի միաձուլումից:

Հայերն ու հայոց պատմությունը հետաքրքրել են նաև օտարներին: Պատմագրության մեջ հայերին ու հայոց պատմությանն առաջինն անդրադարձել են հույները: Հույն պատմիչներ Հերոդոտը (մ.թ.ա. 5-րդ դար), Քսենոփոնը (մ.թ.ա. 5-4-րդ դարեր), Եվդոքսոսը (մ.թ.ա. 4-րդ դար), Դ. Հալիկառնասցին (մ.թ.ա. 1-ին դար), Ստրաբոնը (մ.թ.ա. 63 – մ. թ. 20) և ուրիշներ իրենց աշխատություններում բազմիցս անդրադարձել են հայերին, հայոց պատմությանն ու աշխարհագրությանը;


ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ
ՆՈՅ
ԼԻՒՄ
ՀԱՅԿ
ՄԻՔ
ՀԱՅԹ
ՄԻՔԻ
ՀԱՅԹԻ
ՄԻՔԻ
ՀԱՅԹԻ
ՄԻՔԻ
ՀԱՅԹԻ

Անվան ստուգաբանություն

Հայոց անվանադիր նախնին Հայկն է: Սերունդները հետագայում նրա անունով էլ կոչվել են՝ հայկազունք, հայք, հայեր, երկիրը՝ Հայք, Հայոց աշխարհ: Միջին դարերում«Հայ» արմատին ավելացավ «-ստան» ՝ տեղանք նշանակող վերջածանցը, և երկրի անունը դարձավ Հայաստան:
Համաձայն Մովսես Խորենացու և Միքայել Չամչյանի՝ «Արմենիա» անունն սկիզբ է առել Արամ անունից, ով Հայկ Նահապետի ուղիղ ժառանգորդն էր, իսկ ըստ Լեոյի, կոչվել է հայոց ծագման մասին հունական առասպելի հերոս Արմենիոսի անունից, որը գալով Թեսալիայից՝ բնակվում է Հայկական լեռնաշխարհում և ձուլվում այնտեղ ապրող ցեղերի հետ: Ըստ մեկ այլ վարկածի՝ հայերի ինքնանվանումն առաջացել է Հայասա պետության անվանումից:



Հին պարսկական «Արմինա» անվանումը (𐎠𐎼𐎢𐎺𐎢) հիշատակվում է մ.թ.ա. 523-521 թվականների Բեհիսթունյան արձանագրությունում, որն առաջացել է մեկ այլ հայկական ցեղի՝ Արմե ցեղի (Արմե-Շուպրիա) անվանումից[41]: Ժամանակի ընթացքում հունական արտասանության ձևով պայմանավորված «Արմինա» տեղանունը փոխարկվել է «Արմենիա»-ի: Հին հունարեն «Ἀρμενία» կամ «Ἀρμένιος» եզրույթները առաջին անգամ կիրառվել են մ.թ.ա. 6-5-րդ դարերի պատմիչ Հեկատեոս Միլեթացու աշխատությունում[42], իսկ արդեն մ.թ.ա. 401 թվականի շրջակայքում Քսենոփոնը նկարագրել է հայ գյուղական կյանքի և հյուրընկալության վերաբերյալ մի շարք դրվագներ[43

Հայաստանը հնագույն քարտեզներում

Հայաստանը հանդիպում է աշխարհի հնագույն քարտեզներում և պատմության գրքերում: Երբեմն որպես անկախ պետություն, երբեմն էլ՝ բաժանված հարևան կայսրությունների միջև, բայց միևնույն է Հայաստան-Արմենիա անունը միշտ նշվում է սկսած հին հունական և հռոմեական քարտեզներից մինչ օրս:

. Բաբելոնյան կավե սալիկ, մ.թ.ա. 6-րդ դար

Մեզ հասած աշխարհի ամենահին աշխարհացույց քարտեզը բաբելոնյան քարտեզն է, որը պատկերված է կավե սալիկի վրա: Քարտեզը գտնվել է Իրաքի տարածքից 19-
րդ դարում: Այժմ այն պահվում է Բրիտանական թանգարանում:

Բաբելոնյան կավե սալիկը թվագրվում է մ.թ.ա. 6-րդ դարով: Ասորական և Բաբելոնյան հին աղբյուրներում Արարատյան թագավորությունը հիշատակվում է որպես Ուրարտու: Հենց այս անվամբ էլ այն նշված է աշխարհի հնագույն քարտեզի վրա: Նշված պետություններից միայն Հայաստանը մինչ օրս գոյություն ունի: Մնացած բոլորը վերացել են աշխարհի քարտեզից:



Բաբելոնյան քարտեզը մթա 6-5 դարի քարտեզ է, որը պատկերված է կավե ցուցանակի վրա:

Քարտեզի կենտրոնում հոսում է Եփրատ գետը, որից աջ ու ձախ կողմերում կենտրոնից փոքր-ինչ հյուսիս գտնվում է Բաբելոն պետությունը: Բաբելոնի շուրջ ներկայացված են այդ դարաշրջանի այլ երկրները՝ մասնավորապես Ուրարտուի թագավորությունը կամ Հայաստանը; Կարելի է համարել, որ այս քարտեզի հայոց պետության մասին միջազգային առաջին վկայություններից է:

Քարտեզը պահպանվում է Լոնդոնում, Բրիտանական թանգարանում՝ 92687 թանգարանային համարի տակ:

Ճանաչենք Հայաստանը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրաններից է: Նյութական մշակույթի բազմադարյան հետքերը, հնագույն պատմական վկայությունները, դիցաբանական զրույցները, առասպելները, աշխարհագրական ու անձնական անունները խոսում են այն մասին, որ հայերը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչներն են բնիկները և ապրում են այստեղ անհիշելի ժամանակներից:
Հնագիտական, ազգագրական, լեզվաբանական ու մարդաբանական նոր ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին 20-րդ դարի կեսերից առաջ քաշել նոր տեսակետներ հնդեվրոպացիների (արիական ցեղեր) նախահայրենիքի ու հնդեվրոպական լեզվաընտանիքի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայ ժողովրդի տեղաբնիկ լինելու մասին:

Հայկական լեռնաշխարհը միշտ եղել է տարանցիկ խաչմերուկ, որտեղ խաչվել են և՛ ավանդույթները, և՛ մշակույթը, և՛ որտեղ տեղի է ունեցել դրանց սինթեզը: Հայկական լեռնաշխարհում կարելի է նկատել շատ ընդհանրություններ, որոնք առանձին-առանձին դրսևորվում են և Փոքր Ասիայում, և Սիջագետքում, բայց համատեղ հանդիպում են մեզ մոտ: Հայկական լեռնաշխարհը իսկապես այն կարևորագույն օջախներից է, որն էական դեր է ունեցել համաշխարհային քաղաքակրթության մեջ: Այս տարածաշրջանում բրոնզե-երկաթե դարաշրջաններում իրար հաջորդած մշակույթների ու մշակութային խմբերի միակ ժառանգորդն այն ժողովուրդն է, որն այժմ էլ ապրում է Հայաստանում: Անշուշտ: Մենք ոչ մի տեղից չենք եկել: Սա մեր Հայրենիքն է, և հազարամյակ շարունակ, պետականություն չունենալով, մշակույթի, հավատքի և հնից եկող գեների շնորհիվ պահպանվել ենք և հարատևելու ենք այնքան, քանի կա Երկիր մոլորակը:
-Ո՞րն է մեր դիմակայելու գաղտնիքը: Ի՞նչն է մեզ այստեղ պահում:
-Հնագույններից մեկը լինելու աստվածային շնորհը: Հնագույն մշակույթների ավանդույթները մեր մեջ կրելու ուժը, կենսասիրությունը, լավատեսությունը և հավատը: Պատմությունը կարող են կեղծել այն ժողովուրդները, ովքեր չունեն: Իսկ ով ունի իր դարավոր մշակույթն ու պատմությունը, ավելորդ անգամ այն վերահաստատելու կարիքը չունի: Կա օբյեկտիվ իրականություն, որը հնարավոր չէ փոխել կամ կեղծել:

Շնորհակալություն